ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/307

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամ
Մասնակից՝ «Սապսան» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/156» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ, տեսաձայնագրող սարքերի և տեսախցիկների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17604-2021 գրությամբ «Սապսան» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ Պատվիրատու) 20.10.2021թ.-ի թիվ 01/1327-21 գրության հիման վրա, 27.10.2021թ.-ին «Սապսան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 27.10.2021թ.-ին:

28.10.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-LO-2021/307 համարի ծածկագիրը:

05.11.2021թ.-ին և 26.11.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 05.11.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.11.2021թ.-ին:

2. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը 20.10.2021թ.-ի թիվ 01/1327-21 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (ԵՊՀ) կարիքների համար՝ «Տեսաձայնագրող սարքերի և տեսախցիկների» ձեռքբերման նպատակով, էլեկտրոնային աճուրդով կազմակերպված «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/156» ծածկագրով գնման գործընթացի (այսուհետև՝ մրցույթ) շրջանակներում «Սապսան» ՍՊԸ մասնակիցը ներկայացրել էր մասնակցության հայտ 1-8-րդ չափաբաժինների համար: Հայտերը բացվել են https://eauction.armeps.am կայքի՝ էլեկտրոնային աճուրդ իրականացումն ապահովող համակարգի (այսուհետ՝ Համակարգ) միջոցով՝ 2021թ-ի սեպտեմբերի 17-ին (ժամը 11:00-ին): Հայտերի բացման նիստում վերը նշված ընթացակարգի գնահատող հանձնաժողովը (այսուհետև՝ հանձնաժողով) հաստատեց, որ մասնակցի կողմից 2-րդ չափաբաժնի համար ներկայացված Ապրանքի նկարագիրը (կից ֆայլ «Sapsani arajark») համապատասխանում է հրավերի (կից ֆայլ «Hraver-ԵՊՀ-21-156») պահանջներին: Ուստի տվյալ չափաբաժնի մասով ընտրված մասնակից էր ճանաչվել «Սապսան» ՍՊԸ-ն:

Սակայն 08 հոկտեմբերի 2021թ.-ն «Սապսան» ՍՊԸ-ն՝ իր դիմումին համաձայն (կից ֆայլ «Dimum Sapsanic»), հրաժարվեց պայմանագիր կնքելուց, պարզաբանելով, որ աճուրդի ժամանակ նրանց կողմից տեղի է ունեցել տեխնիկական վրիպում, 2200000 ՀՀ դրամի փոխարեն համակարգ է ներմուծվել 220000 ՀՀ դրամ:

16.12.2016թ. «Գնումների մասին» ՀՀ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերության համաձայն՝ առաջարկում ենք դիտարկել «Սապսան» ՍՊԸ մասնակցի ներառումը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ նշված մասնակիցը խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/156» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Սապսան» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Սապսան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.10.2021թ.-ի գրությամբ դիմել է «Սապսան» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17604-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին՝ չներկայացնելով նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2021/307 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից տեսաձայնագրող սարքերի և տեսախցիկների ձեռքբերման նպատակով 23.08.2021թ.-ին հայտարարվել է «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/156» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Սապսան» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 22.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Սապսան» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

iv. «Սապսան» ՍՊԸ-ն 08.10.2021թ.-ին դիմում է ներկայացրել Պատվիրատուին և հայտնել է, որ սույն թվականի սեպտեմբերի 16-ին մասնակցելով «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/156» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին, 2-րդ չափարաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից: Սակայն հետագայում պարզվել է, որ ներկայացվել է սխալ գին՝ 2 200 000 ՀՀ դրամի փոխարեն նշվել է 220 000 ՀՀ դրամ, ինչից ելնելով անհնար է դառնում նշված ապրանքների մատակարարումը: Խնդրել են նաև հաշվի առնել այն, որ սխալը տեղի է ունեցել շտապողականության արդյունքում և չի պարունակում դիտավորություն:

v. Հանձնաժողովի 08.10.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը հիմք ընդունելով «Սապսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը, որոշել է գնման ընթացակարգը՝ 2-րդ չափաբաժնի մասով, հայտարարել չկայացած և ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն Մասնակցի տվյալները, համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին:

vi. «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 20.10.2021թ.-ի թիվ 01/1327-21 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17604-2021 գրությամբ «Սապսան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների

ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործի փաստերի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կողմից տեսաձայնագրող սարքերի և տեսախցիկների ձեռքբերման նպատակով 23.08.2021թ.-ին հայտարարված «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/156» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (22.09.2021թ.-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Սապսան» ՍՊԸ-ն 2-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից, սակայն վերջինս 08.10.2021թ.-ին դիմում է ներկայացրել Պատվիրատուին և հայտնել է, որ սույն թվականի սեպտեմբերի 16-ին մասնակցելով «ԵՊՀ-ԷԱՃԱՊՁԲ-21/156» ծածկագրով էլեկտրոնային աճուրդին, 2-րդ չափարաժնի մասով ճանաչվել է ընտրված մասնակից: Սակայն հետագայում պարզվել է, որ ներկայացվել է սխալ գին՝ 2 200 000 ՀՀ դրամի փոխարեն նշվել է 220 000 ՀՀ դրամ, ինչից ելնելով անհնար է դառնում նշված ապրանքների մատակարարումը: Խնդրել են նաև հաշվի առնել այն, որ սխալը տեղի է ունեցել շտապողականության արդյունքում և չի պարունակում դիտավորություն: Հանձնաժողովի 08.10.2021թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն Հանձնաժողովը հիմք ընդունելով «Սապսան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված դիմումը, որոշել է գնման ընթացակարգը 2-րդ չափդաբաժնի մասով հայտարարել չկայացած և ՀՀ

կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի համաձայն Մասնակցի տվյալները, համապատասխան հիմքերով ներկայացնել լիազորված մարմին:

«Երևանի պետական համալսարան» հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 20.10.2021թ.-ի թիվ 01/1327-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 08.10.2021թ.-ին՝ Մասնակցի կողմից սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու հիմքով, սակայն «Երևանի պետական համալսարան» հիմնադրամը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 20.10.2021թ.-ի թիվ 01/1327-21 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ

իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը

նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.10.2021թ.-ի թիվ 26/26-1/17604-2021 գրությամբ «Սապսան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/307 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**